

ՌՈՒՍ ԺՈՂՈՎՐԴԻ ՔՐԻՍՏՈՆԵԱՑՄԱՆ 1000-ԱՄՅԱԿԸ
Կ. ՊՈԼՍՈՒՄ

Ռուս Եկեղեցու 1000-ամյակին նվիրված հանդիսությունները սկսվեցին փետրվարի 27-ին, Կիրակմուտքի արարողությամբ Պերայի հունաց Ս. Փանակիա եկեղեցու՝ հանդիսապետությամբ Կ. Պոլսի հունաց Տ. Դեմետրիոս Ա. Սրբազան Պատրիարքի: Արարողությանց ավարտին Հույն և Ռուս Եկեղեցիների դարավոր փոխհարաբերությունների սկզբնական շրջանի մասին զեկուցում կարդաց Պերկամոնի միտրոպոլիտ Տ. Իոաննես սրբազանը:

Փետրվարի 28-ին, կիրակի, բարձրաստիճան հյուրերի և խուռներամ բազմության ներկայությամբ տեղի ունեցավ հանդիսավոր պատարագ հունաց Ս. Գևորգ աթոռանիստ եկեղեցում:

Քրիստոնեական առաքելական և պատմական համարյա բոլոր Աթոռները իրենց ներկայացուցիչներով մասնակցում էին այդ հոգեպարար արարողությանը:

Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին ներկայացնում էր Կ. Պոլսի Հայոց Պատրիարքարանի դիվանապետ, Ամենապատիվ Տ. Ծնորհք Ս. Պատրիարքի փոխանորդ գերաշնորհ Տ. Մեսրոպ եպս. Մութաֆյանը:

Նորին Սրբություն Տ. Դեմետրիոս Ս. Պատրիարքի ձեռամբ մատուցված ս. պատարագից հետո տեղի ունեցավ մասնավոր արարողություն՝ ի պատիվ Ս. Օլգայի և Ս. Վլադիմիրի:

Հանդիսությունները փակվեցին պաշտոնական ճաշկերույթով՝ Պերայի «Դիվան» պանդոկում: